ղեցի, և թէ Վասն էՙր. ասեն նոքա թէ Առանց թէսքէրի և հրամանաց մեր պսակ արարեալ ես. զայս պատճառելով, բայց զբստակն առեալ և նա բազում որոնելով՝ զնոսա ոչ գտանէ վկայիւք, և ձիգ գոլով ճանապարհ հարսանեացն՝ պսակէ։ Եւ զայս լուեալ երիցանց մեր ուղարկեն առ վարդապետն զայս բան, և նա ասէ Թո՛ղ մտանէ։ Այլ և ուղարկեն զինքն ի Ղալֆան և բազում բանս ասացեալ նորա թէ Ի քեզանէ է այս ամենայն, և ես այլ արհամարհանս, և նա ասէ՝ Մո՛ւտ։

Եւ առաւօտուս Շաբաթ (8 Նոյ.) գայ մտանէ յեկեղեցի նա, և ելեալ յեկեղեցոյն գան նման չան, և ի վերայ դիմեալ՝ ոմանք հարկանելով և ոմանք քարշելով, այլք[1]) զպողպատս և զփէչս նորա քարշելով թէ Մտար յեկեղեցի։ Եւ սուտ բուխտան եդեալ ի վերայ թէ Զհրամանս թագաւորին անարգեցեր, Էմիր Շերիւնին տանելով զնա ի զատին. և ոչ ոք կայր մերայնոցս անդ, այլ ի միւս եկեղեցիսն էին. և որ իմացեալ եղեն թէ այս եղև, ելանեն Բ երէցքն մեր, վազեն յեսանէ նոցա և հասանեն մինչ ի Սուլթան Մէհէմէտն, և արարեալ զնոսա անպատմելի նախատանօք ի մէջ այլասեռիցն՝ մինչեւ ի յՕտալարպաշին, դառնալով անտի մինչեւ անդ խօսիւք Ղալֆային. նա եկն եհաս ի Սուլթան Մէհէմէտն և դարձոյց զնոսա. և անդ ևս յՕտալարպաշին զնոսա խայտառակ արարեալ, որ ամենեքեան գնացեալ իւրաքանչիւր տեղս։ Եւ անդի և մեք ելեալ գնացաք մօտ Ղալֆան և բազում բանս ասացեալ նորա թէ Ի քեզանէ, զի յորմէ հետէ ոչ գայր յեկեղեցի՝ ևս նոքա ոչ առնէին բան մի. և Ղալֆան եկն ի հետս մեր մինչև ի սահմանս տանց մեր։ Երեկոյիս առեալ երիցունքն մեր զՏէր Աստուածատուրն

1) այլ.